ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/56119-2019

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-356-12.11.2019-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1772 - Ա որոշումը:

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Զ. Դավեյան
Հեռ. 515685

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-356-12.11.2019-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Նկատի ունենալով, որ առաջարկվող նախագծերի փաթեթով ըստ էության առաջարկվում է 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամների նկատմամբ սահմանել խնամակալություն, իսկ խնամակալների համար որպես պետական նպաստ սահմանել խնամակալության նպաստ, նախ և առաջ հարկ ենք համարում անդրադառնալ հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ խնամակալության հնարավորությանը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է խնամակալություն սահմանել նաև «3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչված» քաղաքացիների նկատմամբ: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն՝ «Խնամակալությունը և հոգաբարձությունը սահմանվում են անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության համար»: Այսինքն՝ գործունակ քաղաքացու նկատմամբ խնամակալություն և հոգաբարձություն չի կարող սահմանվել:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի՝ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, կարող է դատարանով ճանաչվել անգործունակ:

Այսինքն՝ գործող օրենսդրությամբ անգործունակ ճանաչվել կարող է հոգեկան խանգարում ունեցող քաղաքացին, որի նկատմամբ հետագայում սահմանվում է խնամակալություն:

Կարելի է փաստել, որ օրենսդիրը խնամակալության հիմքում դրել է այն անձանց շահերի պաշտպանությունը, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն հասկանալ և (կամ) ղեկավարել իրենց գործողությունները, սեփական գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերել և իրականացնել, ստանձնել քաղաքացիական պարտականություններ:

Պետք է նշել, որ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 6.2-րդ հոդվածի համաձայն՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ ճանաչված անձին տրվում է հաշմանդամության խումբ (1-ին, 2-րդ և 3-րդ խումբ), իսկ մինչև 18 տարեկան երեխաներին՝ հաշմանդամ երեխայի կարգավիճակ:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամն այն անձն է, որը առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն: Իսկ կենսագործունեության սահմանափակումները անձի ինքնասպասարկման ապահովման ունակության, ինքնուրույն տեղաշարժվելու, կողմնորոշվելու, հաղորդակցվելու, սեփական վարքը հսկելու, ուսումնառելու և աշխատանքային գործունեությամբ զբաղվելու (երեխաների համար՝ նաև խաղալու) կարողությունների կամ հնարավորությունների լրիվ կամ մասնակի կորուստն են (ներառյալ՝ վերականգնման տեխնիկական միջոցների և այլ օժանդակ պարագաների օգտագործմամբ տեղաշարժվելը, տեսնելը, լսելը և (կամ) խոսելը):

Այսինքն՝ կենսագործունեության սահմանափակումները վերաբերում են ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան խանգարումներին: Ուստի անձը, որն ունի հոգեկան խանգարում, կարող է ճանաչվել հաշմանդամ (որպիսի փաստը դեռևս բավարար չէ նրա նկատմամբ խնամակալություն սահմանելու համար), իսկ իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու ունակությունից զրկված լինելու դեպքում միևնույն ժամանակ կարող է ճանաչվել նաև անգործունակ, որի հետևանքը խնամակալության սահմանումն է: Հետևաբար, եթե անգամ անձը տառապում է որոշակի հոգեկան հիվանդությամբ, սակայն զրկված չէ իր գործողությունների նշանակությունը հասկանալու կամ դրանք ղեկավարելու հնարավորությունից, ապա վերջինս անգործունակ չի ճանաչվում: Պատահական չէ, որ անգործունակ ճանաչելու գործերով նշանակվում է դատահոգեբուժական փորձաքննություն:

Անդրադառնալով որոշակի ֆիզիկական առողջության խաթարումների արդյունքում հաշմանդամ ճանաչված անձանց նկատմամբ խնամակալության սահմանմանը՝ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խնամակալները խնամարկյալների ներկայացուցիչներն են օրենքի ուժով և նրանց անունից ու ի շահ նրանց կնքում են բոլոր անհրաժեշտ գործարքները:

Ֆիզիկական առողջության խաթարումը չի կարող միանշանակ ենթադրել, որ անձը զրկվել է իր գործողությունների նշանակությունը հասկանալու և դրանք ղեկավարելու ունակությունից: Հետևաբար նրանց նկատմամբ խնամակալություն սահմանելը կնշանակի նրանց իրավասուբյեկտության կտրուկ սահմանափակում, նրանց ազատ կամահայտնությունից զրկում, նրանց կողմից իրենց գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իրենց համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու գործընթացին

ոչ իրավաչափ միջամտություն: Այն դեպքերում, երբ անձը, ով որոշակի, զուտ ֆիզիկական կարողությունների սահմանափակման պատճառով չի կարողանում, օրինակ, կնքել գործարքներ, ապա կարող է այդ նպատակով համապատասխան լիազորագիր տալ մեկ այլ անձի՝ կառավարելով քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների ստանձնման գործընթացը: Մինչդեռ խնամակալության սահմանման պարագայում նա զրկված է անգամ այդպիսի համաձայնություն տալու հնարավորությունից: Վերոնշյալ դրույթները բացահայտ անհամապատասխանության մեջ են ՀՀ Սահմանադրության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հետ:

Այսպես՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկմամբ (CRPD/C/ARM/CO/1) Կոմիտեն արտահայտել է իր մտահոգությունը Սահմանադրությունում և «Քաղաքացիական դատավարության մասին» ՀՀ օրենսգրքում «խտրական իրավական դրույթների» վերաբերյալ, որոնք թույլ են տալիս հոգեբանասոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց զրկել գործունակության իրավունքից և նշանակել խնամակալ. «Մտահոգիչ է նաև խնամակալի միջոցով որոշումների կայացման համակարգը որոշումների կայացման աջակցության համակարգով փոխարինելու մեխանիզմների բացակայությունը: ... «Վկայակոչելով օրենքի առաջ հավասարության մասին ընդհանուր մեկնաբանություն 1-ը (2014)՝ Կոմիտեն հանձնարարում է մասնակից պետությանը ուժը կորցրած ճանաչել Սահմանադրության և «Քաղաքացիական դատավարության մասին» ՀՀ օրենսգրքի խտրական դրույթները և վերականգնել հաշմանդամություն ունեցող անձանց համար լիարժեք իրավունակությունը և ներկայացնել որոշումների կայացման աջակցության համակարգը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է, ինչից ածանցվում է նաև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծն ընդունելու անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է «Ընտանեկան օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին, համաձայն որի՝ նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել դրա 136-րդ հոդվածի 4-րդ մասը (որի համաձայն՝ խնամակալն ու հոգաբարձուն խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխայի նկատմամբ խնամակալության և հոգաբարձության պարտականությունները կատարում են անհատույց) այն հիմնավորմամբ, որ սահմանվում է խնամակալության նպաստ, ապա գտնում ենք, որ խնամակալության նպաստ սահմանելը չի նշանակում խնամակալության հատուցելիություն: Այն ենթադրում է խնամակալի նկատմամբ պետական սոցիալական աջակցություն: Մինչդեռ Ընտանեկան օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը նշանակում է, որ անձն իր պարտականությունների կատարման համար վճար չի ստանում խնա-

մարկյալից: Հետևաբար առաջարկում ենք ձեռնպահ մնալ նաև Ընտանեկան օրենսգրքում փոփոխություն կատարելուց:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն՝ առաջարկվում է որպես պետական նպաստի տեսակ սահմանել նաև խնամակալության նպաստը՝ նոր՝ 4.1 գլխով սահմանելով խնամակալության նպաստ ստանալու իրավունքը և տրամադրման հիմքը:

Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք, որ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքում լրացվող 4.1 գլխի 17.1-ին հոդվածի 2-րդ մասում սահմանվում է, որ կառավարությունը կարող է սահմանել նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմաններ: Հարկ է նկատի ունենալ, որ իրավունքի իրացման պայմանները չեն կարող սահմանվել կառավարության որոշմամբ. ընդ որում, այդ պայմանների վերացումը միաժամանակ նախատեսվում է որպես խնամակալության նպաստ ստանալու իրավունքի դադարեցման հիմք:

Բացի այդ անհրաժեշտ է հստակեցնել շահառուների շրջանակը (արդյոք խնամակալության նպաստ առաջարկվում է նշանակել միայն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամակալների՞ դեպքում, թե՞ նկատի է առնվում նաև այլ շահառուների շրջանակ), իրականացնել համապատասխան հաշվարկներ, որոնք թույլ կտան հասկանալու պետական բյուջե անհրաժեշտ միջոցների չափը, և լրացուցիչ քննարկել խնամակալության նպաստի չափը (այն պե՞տք է համադրելի լինի խնամատար ընտանիքում խնամվող մեկ երեխայի համար տրվող գումարին, թե առաջարկվում է այլ մոտեցում): Խնամակալության ինստիտուտի զարգացումը և խնամակալների աջակցությունը նախատեսված է նաև աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված՝ Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համալիր միջոցառումների ծրագրով, սակայն, միաժամանակ, այդ աջակցության ձևերը պետք է մանրամասն քննարկվեն՝ հաշվի առնելով այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ երեխայի խնամքի հարցում նյութական խթանի ներդրման դեպքում՝ խուսափելու այն իրավիճակներից, երբ երեխայի խնամքը խնամակալի կողմից կարող է պայմանավորվել առավելապես նյութական շահագրգռվածությամբ՝ ի հակասություն երեխայի լավագույն շահի:

Նման նպաստի ներդրումը կպահանջի նաև զուգահեռ փոփոխություններ և լրացումներ մի շարք իրավական ակտերում, որոնց մասով անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ քարտեզագրում:

Միաժամանակ առաջարկում ենք՝ սույն օրենքի նախագծով օրենքում լրացվող 17.1-ին հոդվածի ձևակերպումից հանել 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչված անձանց վերաբերող կարգավորումը՝ նկատի ունենալով, որ վերջիններիս նկատմամբ խնամակալություն սահմանվել չի կարող, ինչպես նաև նշված կարգավորումն առավել նպատակահարմար է սահմանել ոչ թե 4.1 գլխով, այլ 8.1 գլխով՝ նկատի ունենալով, որ օրենքի 5-րդ

հոդվածում խնամակալության նպաստը սահմանվում է պետական նպաստների ցանկում վերջին կետով (11-րդ կետ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2019 թվականի N 1772 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-356-12.11.2019-ԱՍ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 28

Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Պ-356-12.11.2019-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 11-րդ կետով.

«11) խնամակալության նպաստը:ե:

Հոդված 2. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1-ին գլխով.

«ԳԼՈՒԽ 4.1

Հոդված 17.1. Խնամակալության նպաստ ստանալու իրավունքը եւ տրամադրման հիմքը

1. Խնամակալության նպաստ ստանալու իրավունք ունեն տասնչորս տարին չլրացած անչափահասների նկատմամբ կամ 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվածների նկատմամբ կամ հոգեկան խանգարման հետեւանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ խնամակալ ճանաչվածները, որոնք հաշվառված են խնամակալության նպաստի համակարգում:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել խնամակալության նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմաններ:

3. Խնամակալության նպաստ ստանալու իրավունքը ծագում է դիմողի դիմելու օրվա դրությամբ, եւ խնամակալության նպաստը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսից:

Հոդված 17.2. Խնամակալության նպաստ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը

1. խնամակալության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) խնամակալության նպաստի համակարգում հաշվառումից դուրս գալու դեպքում.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած խնամակալության նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմանների վերացման դեպքում.

2) դիմողի կողմից սույն օրենքով սահմանված ժամկետում տարածքային կենտրոն անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում.

3) խնամակալության նպաստն անընդմեջ 3 ամիս անհարգելի պատճառով չստանալու դեպքում.

4) խնամակալության նպաստ ստացողի՝ խնամակալության համակարգում կրկնակի հաշվառման դեպքում:

2. Խնամակալության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ
Պ-356[1]-12.11.2019-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ,

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» 1993 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-57 օրենքի 28-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությունով.

«Հաշմանդամների խնամակալությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ
Պ-356[2]-12.11.2019-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի ընտանեկան օրենսգրքի 136-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ
Պ-356[3]-12.11.2019-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Խնամակալություն սահմանվում է տասնչորս տարին չլրացած անչափահասների, 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչված, ինչպես նաեւ հոգեկան խանգարման հետեւանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Գործող օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետությունում խնամակալության ինստիտուտը թերի է, այն կատարելագործելու եւ որպես պետական սոցիալական աջակցության բաղադիչ ունենալու անհրաժեշտություն կա:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել խնամակալության նպաստ: Ելնելով նրանից, որ գործող քաղաքացիական օրենսգրքով, սահմանված է խնամակալ ճանաչվելու շատ նեղ հնարավորություն, ներկայացված նախագծով մի փոքր ընդլայնում ենք խնամակալ ճանաչվելու հնարավորությունը: Հնարավորություն ենք տալիս 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչված անձանց նույնպես ունենալ խնամակալներ, քանի որ այդ քաղաքացիներն ունեն գործունեության այնպիսի սահմանափակումներ, որ առանց մեկ այլ անձի չեն կարող ապահովել իրենց կենսագործունեությունը: Նշված կարգավորումների համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն անել նաեւ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքում: Քանի որ առաջարկում ենք սահմանել խնամակալության նպաստ, իսկ ընտանեկան օրենսգրքում խնամակալությունը սահմանված է որպես անհատույց պարտականություն, ապա անհրաժեշտություն է առաջանում նաեւ փոխել այդ անհատույց լինելու հանգամանքը:

Նախագծի նպատակը սոցիալական պետությանը հարիր սոցիալական աջակցության ծրագրեր ունենալն է: Ներկայումս ընտանիքում խնամքի կարիք ունեցողների խնամակալները որեւէ աջակցություն չեն ստանում, չեն կարողանում ունենալ նորմալ կենսագործունեություն: Նախագիծը նախատեսում է այդ համակարգում ընդգրկված անձանց տրամադրել ֆինանսական աջակցություն: